

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՅՆԹԱՂԵՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մերսինում (Թուրքիա) ծնված, Բեյրութի Ամերիկյան համալսարանի երաժշտության բաժնի շրջանավարտ, երաժշտական կրթությունը Փարիզում ավարտած, երաժշտության մեջ ռոմանտիզմի ուղղությունը ներկայացնող Արուսյակ Այնթապյանի ժառանգության մեջ, բնականաբար, մեծ տեղ են գրավում դաշնամուրային ստեղծագործությունները: Նրա գրչին են պատկանում քաղաքական, պետական, հոգևոր, հասարակական ականավոր գործիչներին նվիրված գործերը, այդ թվում՝ «Bénédiction Papale au Liban» («Պապի օրհնությունը Լիբանանում»)՝ նվիրված Հռոմի 262-րդ պապ Պողոս VI-ին (1965), «Hymne au Liban» («Ձոն Լիբանանին»)՝ նվիրված Լիբանանի Հանրապետության նախագահ Շառլ Հելուին (1966), «La Paix» («Խաղաղություն»)՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար Ու Թանին (1968), «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»)՝ նվիրված ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու հիշատակին (1963), «Hommage» («Հարգանքի տուրք»)՝ նվիրված Շառլ դը Գոլին (1969), ինչպես նաև եղբոր՝ Ջորջ Այնթապյանի հիշատակին նվիրված «Sur une tombe» («Շիրմի վրա», 1964) և «Les Larmes» /«Արցունքները», 1964/, «Bonheur perdu» /«Կորսված երջանկությունը»/, «Odyssée Spatiale» («Տիեզերական ոդիսական», 1970), «Tristesse» /«Տխրությունը»/, «Regret» /«Ափսոսանքը»/, «Separation» /«Բաժանումը»/, «Consolation» /«Մխիթարությունը»/, «Les Adieux» /«Հրաժեշտը»/: դաշնամուրային ռապսոդիաները, «Ֆանտազիան», գործեր երկու դաշնամուրի համար՝ «Souvenir» /«Հուշը»/, «Pour toi seul» /«Քեզ համար միայն»/ և այլն: Հեղինակել է նաև երգեր՝ հայերեն և ֆրանսերեն տեքստերով: Լիբանանահայ կոմպոզիտորի ժառանգության մեջ հատուկ տեղ են

գրավում լիբանանյան ժողովրդական դաբկենների մշակումները դաշնամուրի և երկու դաշնամուրի համար:

Բանալի բառեր – Արուսյակ Այնթապյան, լիբանանահայ կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ:

«Ծանօթ եւ յարգուած անուն մըն է ան, որպէս գնահատուած դաշնակահարուհի, վաստակաւոր ուսուցչուհի, եւ մանաւանդ տաղանդաւոր յօրինող որ մասնաւորաբար վերջին երեք տարիներու ընթացքին իր մասին խօսիլ տուաւ Լիբանանեան թէ օտար մամուլը: Համեստ հայուհի մըն է ան. կ'ընդունի թէ իր յօրինելու ձիրքը Աստուածատուր պարգեւ մըն է եւ թէ ինք անոր մեկնաբանն է լոկ: Հայրենասէր է ան, հպարտ իր ծաղկող հայրենիքի վերելքով, խանդավառ արուեստի մարզին մէջ արձանագրուող յաջողութիւններով, հայ երաժշտութեան վարպետ Արամ Խաչատուրեանով եւ անոր արժանի յաջորդներով»¹:

Խոսքը լիբանանահայ կոմպոզիտոր, դաշնակահարուհի, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապյանի մասին է, ում հայ երաժշտագիտությունն անդրադարձել էր ընդամենը հետևյալ տողերով. «Արուսեակ Այնթափլեանը պսակաւոր է Փարիզի արուեստների, գիտութեան եւ գրականութեան մեծ պատուանշանի: Շատ շնորհալի դաշնակահարուհին յաճախ է հանդէս եկել իր մենահամերգներով: Նա օժտուած է նաեւ ստեղծագործական ձիրքով: Սուղ տուեալներից քաղուած փաստերի համաձայն՝ «Զարթօնք»-ի (Բէյրութ, 30 մայիսի, 1963) 1963 մայիսի 2-ին տեղի ունեցած տարեկան համերգում կատարուել են նրա ստեղծագործութիւններից երկուսը՝ «Ռափսոդիա թիւ 2 եւ լիբանանեան տապքէի ժողովրդական եղանակների մշակումները «Շաթթի Եա

¹ **Գոճայեան Աստղիկ**, Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, ԳԱԹ, Արուսյակ Այնթապյանի ֆոնդ N 66:

Տինետա» անուանմամբ»²:

Ընդամենն այսքանը՝ Արուսյակ Այնթապյանի մասին: Եվ դա այն դեպքում, որ հենց Հայաստանում՝ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում է գտնվում նրա արխիվը³, որը մինչև վերջերս չէր ուսումնասիրվել⁴:

Մերսինում ծնված, Բեյրութի Ամերիկյան համալսարանի երաժշտության բաժնի շրջանավարտ, երաժշտական կրթությունը Փարիզում ավարտած, համաշխարհային պիանիզմի տիտաններից մեկին՝ ֆրանսիացի դաշնակահար, մանկավարժ, դիրիժոր, երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ Ալֆրեդ Կորտոյին աշակերտած, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, շքանշանների ու մեդալների ասպետ, երաժշտության մեջ ռոմանտիզմի ուղղությունը ներկայացնող Ա.Այնթապյանի ժառանգության մեջ, բնականաբար, մեծ տեղ են գրավում դաշնամուրային ստեղծագործությունները: Նրա գրչին են

² **Բրուտեան Ցիցիլիա**, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները, Երեւան, 1996, էջ 229-230:

³ ԳԱԹ-ում պահպանվող Ա.Այնթապյանի ֆոնդը ստացվել է 1981-ին, Այնթապյան քույրերի կողմից և մշակվել է 1986-ին՝ երաժշտական բաժնի վարիչ Յողիկ Բեքարյանի կողմից: Արխիվը պարունակում է կոմպոզիտորի ստեղծագործությունների ձեռագրերը և հրատարակված օրինակները, համերգների ծրագրերը, հայալեզու և ֆրանսալեզու մամուլում Այնթապյանի մասին տեղ գտած հրապարակումները, նրա ստեղծագործական ու համերգային գործունեությունը լուսաբանող անձնական փաստաթղթերը, նամակները, հայերեն և ֆրանսերեն բանաստեղծությունները, ստեղծագործությունների ձայնագրությունները, լուսանկարները, հրավիրատոմսերը, շքանշաններն ու մեդալները, ընդհանուր առմամբ՝ 462 փաստաթուղթ, որը կազմում է 125 միավոր:

⁴ 2012-ին լույս տեսավ տողերիս հեղինակի «Լիբանանահայ երաժշտություն: Արուսյակ Այնթապյան» մենագրությունը, որտեղ առաջին անգամ արխիվային նյութերի հիման վրա ներկայացրեցինք լիբանանահայ դաշնակահարուհի, մանկավարժ, կոմպոզիտոր և երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապյանի գործունեությունն ու ստեղծագործությունը: Գրքի հավելվածում ներկայացված են Ա.Այնթապյանի մինչ օրս մեզ անհայտ, մինչդեռ ժամանակին մեծ ժողովրդականություն վայելած նրա դաշնամուրային ստեղծագործություններից երկուսի՝ N 3 «Bonheur Retrouve» («Վերագտած երջանկություն») ռապսոդիայի և արաբական ժողովրդական դափկեի մշակում «Chatti ya dinyi» պիեսի, ինչպես նաև ձայնի և դաշնամուրի համար գրված «Pour toi seul» («Միայն քեզ համար») տանգոյի նոտաները, որոնք գիտական

պատկանում քաղաքական, պետական, հոգևոր, հասարակական ականավոր գործիչներին նվիրված և ժամանակին մեծ ժողովրդականություն վայելած գործերը, այդ թվում՝ «Bénédiction Papale au Liban» («Պապի օրհնությունը Լիբանանում»)՝ նվիրված Հռոմի 262-րդ պապ Պողոս VI-ին (1965)⁵, «Hymne au Liban» («Ձոն Լիբանանին»)՝ նվիրված Լիբանանի Հանրապետության նախագահ Շառլ Հելուին (1966)⁶, «La Paix» («Խաղաղություն»)՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար Ուի Թանին (1968)⁷, «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»)՝ նվիրված ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու հիշատակին (1963)⁸, «Hommage» («Հարգանքի տուրք»)՝ նվիրված Շառլ դը Գոլին (1969)⁹, ինչպես նաև եղբոր՝ Ջորջ Այնթապյանի հիշատակին նվիրված «Sur une tombe» («Շիրմի վրա», 1964)¹⁰ և «Արցունքները»¹¹, «Odyssee Spatiale» («Տիեզերական ոդիսական», 1970), դաշնամուրային ռապսոդիաները¹², «Ֆանտազիան»¹³, «Կորսված

շրջանառության մեջ դրվեցին առաջին անգամ:

⁵ «Bénédiction Papale au Liban», Նվիրված է Պողոս VI Պապին, 1965, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 12 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 1:

⁶ «Hymne au Liban», 1966, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 11 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 8:

⁷ «La Paix», 1968, նվիրված է Թանին, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 17 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 9:

⁸ «La Tragédie de Dallas», 1963, նվիրված է Քենեդիի հիշատակին, կից՝ թերի հատվածներ և համառոտագրություն, ձեռագիր 9 թերթ, 3 թերթ, ընդ.՝ 12 թերթ, 2 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 10:

⁹ «Hommage», նվիրված է դը Գոլին, 1969, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 19 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 7:

¹⁰ «Sur une tombe», 1964թ. 15 դեկտեմբերի, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 5 թերթ, 4 թերթ, ընդ.՝ 9 թերթ, 2 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 24:

¹¹ «Les Larmes», 1953, նվիրված է Ջորջ Այնթապյանի հիշատակին, ձեռագիր 5 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 13:

¹² Rhapsodie N 1, անթվակիր, ձեռագիր 5 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 15: Rhapsodie N 2, 1963, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 10 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 16: Rhapsodie N 3 (Bonheur retrouvé), անթվակիր, ձեռագիր 9 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 17: Rhapsodie N 3 (Rêve poétique), անթվակիր, ձեռագիր 11 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 18: Rhapsodie, 1974, ձեռագիր 4 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 19:

¹³ «Fantaisie», անթվակիր, Բեյրութ, սպագիր 2 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 6:

երջանկությունը»¹⁴, «Տխրությունը»¹⁵, «Ափսոսանքը»¹⁶, «Բաժանումը»¹⁷, «Միխիթարությունը»¹⁸, «Հրաժեշտը»՝ նվիրված բոլոր նրանց, ովքեր սիրել են¹⁹ և այլն, ինչպես նաև գործեր երկու դաշնամուրի համար՝ «Հուշը», «Քեզ համար միայն» և այլն: Հեղինակել է նաև երգեր՝ հայերեն և ֆրանսերեն տեքստերով: Լիբանանահայ կոմպոզիտորի ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում լիբանանյան ժողովրդական դաբկենների մշակումները դաշնամուրի²⁰ և երկու դաշնամուրի համար:

Ա.Այնթապյանը ծնվել է Մերսինում (Թուրքիա)²¹: Վաղ են ի հայտ գալիս փոքրիկի երաժշտական ընդունակությունները. դաշնամուրի հետ առաջին ծանոթությունը տեղի է ունենում երեք տարեկանում: Իսկ հինգ տարեկանում արդեն սկսվում են դաշնամուրի պարապմունքներն իտալացի Ալֆրեդո Մոդիկայի ղեկավարությամբ²²: Իր անդրանիկ ստեղծագործությունն Ա.Այնթապյանը հորինել է 13 տարեկանում: «Տասներեք տարեկանիս գրած եմ «Քեզի Համար Միայն» կարճ կտորը, որ պահած եմ իր նախկին պարզութեանը մեջ: Երաժշտական յօրինումներես ոմանք հետևեալներն են.- Ռաբգոսիներ թիւ 1 եւ 2, «Հրաժեշտ», «Միխիթարանք», «Գերեզմանաքարի մը Վրայ», «Վալս», «Ֆանթեզի»,

¹⁴ «Bonheur perdu», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 2:

¹⁵ «Tristesse», անթվակիր, ձեռագիր 2 թերթ, 3 թերթ, ընդ.՝ 5 թերթ, 2 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 25:

¹⁶ «Regret», անթվակիր, Բեյրութ, տպագիր 2 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 20:

¹⁷ «Séparation», անթվակիր, ձեռագիր 6 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 23:

¹⁸ «Consolation», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, 5 թերթ, ընդ.՝ 10 թերթ, 2 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 4:

¹⁹ «Les Adieux», անթվակիր, ձեռագիր 6 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 12:

²⁰ «Chatti ya dinnyi», անթվակիր, ձեռագիր 9 թերթ, 5 թերթ, 2 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 3: «Debki N2», անթվակիր, ձեռագիր 11 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 5:

²¹ Ցավոք, մեզ չհաջողվեց պարզել Ա.Այնթապյանի ծննդյան թիվը: ԳԱԹ Ա.Այնթապյանի արխիվում գտնվող կենսագրություններում այն բացակայում է (տե՛ս Նյութեր՝ անփոփված հանդեսներում. 1968-74թթ., ֆրանսերեն, տպագիր 4 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62 և N 63):

«Զոջում», «Տիրութիւն», «Յիշատակ», «Միրտ մը Քարի Տակ»: Կը տեսնէք թէ որքան զգացական եմ: Ասոնց կողքին դաշնակի յարմարցուցած եմ «Եա Ղըզայէլ» եւ «Շաթթի Եա Տընէա», անոնց տալով նաեւ հայկական երանգաւորում»²³:

Տարիներ անց, անդրադառնալով իր մանկության շրջանին և պատասխանելով Տրիպոլիում լույս տեսնող «Երիտասարդ հայուհի»-ի թղթակից Աստղիկ Գոճայանի «Ո՞վ մղած է ձեզ այդքան փոքր տարիքէն սիրելու երաժշտութիւնը եւ մանաւանդ դաշնակը» հարցին՝ «Ան պահ մը երազկոտ նայուածքը կ'ուղղէ անորոշին, ակնյայտօրէն փոխադրուած իր մանկութեան օրերը, ու կը պատասխանէ մեղմօրէն:

- Երաժշտասէր ընտանիքի մը զաւակ էի. երեց քոյրս դաշնակ կը նուագէր, եղբայրս՝ ջութակ, իսկ հայրս լաւ ձայն ուներ: Այս մթնոլորտը պատճառ եղաւ որ դաշնակի դասերս շարունակեմ եւ հասնիմ մինչեւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի երաժշտութեան բաժինը, ուր Քուկէլի տնօրինութեան շրջանին աշակերտեցի Ալֆրետ Քորթոյի. բոլորելով այդ շրջանին գոյութիւն ունեցող երաժշտութեան չորսամեայ շրջանը, ստացայ Պսակաւոր Արուեստից տիտղոս: Ապա մեկնեցայ Բարիզ, ուր մենաշնորհը ունեցայ անձնական աշակերտուհին ըլլալու Քորթոյի, որուն շունչին տակ կաղապարեցի դաշնակահարուհիի իմ նախասիրութիւններս, որոնցմէ զլիսաւորն էր Շոբէնը, եւ յետոյ Ռախմաննիտֆ, Լից եւ Պախ»²⁴:

Ա.Այնթապլյանը տարրական և միջնակարգ կրթությունն ստացել է Բէյրութի Գթության դուստրերի մոտ (Les Filles de Charité), իսկ բարձրագոյն կրթությունը՝ Փարիզի L'Ecole Normal de Musique-ի հովանու ներքո, հանրային կրթության մինիստրության կողմից արտոնված Բէյրութի Ամերիկյան համալսարանի երաժշտության բաժնում և ավարտել Փարիզում՝ աշակերտելով Ա.Կորտոյին,

²² Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 66:

²³ **Գոճայեան Աստղիկ**, Արուեսակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 66:

²⁴ Նույն տեղում:

ուշադրությունը բևեռելով իր նախասիրած կոմպոզիտորի՝ Շոպենի ստեղծագործությունների վրա²⁵:

Անուրանալի է ֆրանսիացի դաշնակահար՝ մասնավորապես Շոպենի ու Շումանի ստեղծագործության մասնագետ, մանկավարժ, դիրիժոր, երաժշտագետ՝ պիանիզմի պատմության և տեսության վերաբերյալ աշխատությունների հեղինակ, երաժշտական-հասարակական գործիչ, Փարիզի L'Ecole Normal de Musique-ի (1919) հիմնադիր, մեծ վարպետ Ալֆրեդ Կորտոյի (1877-1962) դերն Ա.Այնթապյանի կատարողական ու ստեղծագործական դիմանկարի ձևավորման գործում: Շոպենի և Շումանի ստեղծագործությունների համարձակ մեկնաբանը՝ հարյուրամյակի մեծագույն երաժիշտներից մեկը, խորհրդանշեց դասական դարաշրջանի մայրամուտը: Մասնագետները նրան համարում էին անհատական, սուբյեկտիվ ոճի վերջին ներկայացուցիչը, ով ունակ էր ճշգրիտ տեխնիկական զոհաբերել հանուն ինտուիցիայի ամբողջականության, մեկնաբանման արտահայտչականության և ստեղծագործության իսկական ոգու արտահայտման: Թեև կատարողական արվեստում հետագայում այդ մոտեցումն իր տեղը զիջեց ժամանակակից «գիտական» նվագին, որը կենտրոնում դնելով տրամաբանությունն ու ճշգրտությունը՝ հավասարության նշան էր դնում երաժշտական ստեղծագործության իսկական կատարման և տառացի մետրոնոմիական «մեկնաբանման» միջև: Սակայն ժամանակի խորքից այսօր էլ մեզ է հասնում Կորտոյի պատգամը՝ «Ամենակարևորը՝ ազատությունն տալ երևակայությանը, կրկին ստեղծելով ստեղծագործությունը: Սա՛ է հենց ինտերպրետացիան»²⁶:

Ա.Այնթապյանի գործունեությունը ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ կատարողական-համերգային գործունեություն, մանկավարժական գործունեություն և

²⁵ Տե՛ս 'Նյութեր՝ ամփոփված հանդեսներում. 1968-74թթ., ֆրանսերեն, տպագիր 4 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62 և N 63:

²⁶ http://ru.wikipedia.org/w/index.php?title=Корто,_Альфред&oldid=50141462.

ստեղծագործություն: Նա բազմաթիվ համերգներով հանդես է եկել Բեյրութում, Տրիպոլիում, Դամասկոսում: «Ռադիո-Արևելքը նրան է պարտական հայկական և արտասահմանյան ծրագրերով համերգների նախաձեռնության համար, որոնց գեղարվեստական ղեկավարն էր և 8 ամիս տևած բոլոր 15 օրերի ընթացքում հենց նա էր դաշնամուրով նվագակցում ծրագրի բոլոր մասերին (երգիչներ, բազմաձայն խմբերգեր, ջութակի և այլն)»²⁷:

«Նոր կյանքը» 1966թ. նոյեմբերի 6-ի համարում ծավալուն հոդվածով անդրադառնում է Ա.Այնթապյանի՝ Փարիզ ու Հռոմ կատարած ուղևորություններին: «Պզանտոնեան Սրբուհի Աննա քոյրերու գլխի դաշնակի փրօֆեսոր, յօրինող եւ արժէքաւոր դաշնակահարուհի Օր. Արուսեակ Այնթապլեան, այս ամառ յաջող շրջապտոյտ մը կատարեց դէպի եւրոպական ոստաններ:

Օր. Այնթապլեան մասնաւոր յաջողութիւն արձանագրեց Փարիզի մէջ, ուր առիթը ունեցաւ ծանօթանալու եւ իր գործերը ներկայացնելու փարիզեան երաժշտագէտներու ամենաբարձր շրջանակներուն:

Արդարեւ, Այնթապլեան անձանօթ մը չէր փարիզեան շրջանակներուն համար: Մի քանի տարիներ առաջ ան յօրինած էր «Միայն քեզի համար», «Ռափստոի թիւ մէկ», «Տխրութիւն» եւ այլ մեղոտիները, որոնք ժամանակին որոշ յաջողութիւն արձանագրեցին: Ֆօնթենեպլէոյի սքանչելի անտառին մէջ էր որ Արուսեակ Այնթապլեան ներշնչուած եւ յօրինած է Ռափստոին:

Օր. Այնթապլեան մեծ խանդավառութեամբ կը նկարագրէ Ֆրանսայի իր բարեկամներուն ցոյց տուած ընդունելութիւնը: Ասոնց շարքին ան կը յիշէ անունները Ոճրադատ Ատեանի մեծ փաստաբաններէն մեթր Թէօսօր Վալենսիին, հռչակաւոր դերասանուհի Կապի Մօրլէրը, փարիզեան բեմի հսկաներէն՝ Անտրէ Լիւկէն եւ երկու նշանաւոր տաղերգուներ Ժաննա Բաքո եւ Ժան

²⁷ Տե՛ս Նյութեր՝ ամփոփված հանդեսներում. 1968-74թթ., ֆրանսերեն, տպագիր 4 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62 և N 63:

Ժուէն: Բոլորն ալ շրջապատած են հայ արուեստագիտուհին եւ խանդավառուած անոր տաղանդով եւ զգայութեամբ:

«Տալլասի Ողբերգութիւնը», նուիրուած հանգուցեալ նախագահ Քէնետիի յիշատակին, շատ յուզած է տիկին Ժագլին Քէնետին, որ շնորհակալութեան գիր մը յղած է արուեստագիտուհիին՝ Լիբանանի մօտ այն ժամանակուայ ամերիկեան դեսպան Պր. Արմին Մայերի միջոցաւ:

Փարիզեան մամուլը, հեռատեսիլն ու ձայնասփիւռը մեծ հետաքրքրութիւն ցոյց տուած են եւ գովասանական խօսքեր շնորհած անոր արուեստին մասին: Նախքան Փարիզ մեկնումը, Արուսեակ Այնթապլեան ընդունուած էր նախ. Հելուի կողմէ եւ յանձնած ժապաւէն մը՝ «Քայլերգ Լիբանանի համար» իր յօրինումէն, որ ձօնուած էր նախագահին: Ազդուած, նախագահ Հելու խոստացած է անգամ մը եւս ընդունիլ Օր. Այնթապլեանը՝ իր տպաւորութիւնները յայտնելու համար:

Ֆրանսական մայրաքաղաքին մէջ Օր. Այնթապլեան կ'ընդունուի «Փարիզեան երաժշտական շաբաթներ»ու արուեստի խորհրդատու Տիկին Լին Վիալայի կողմէ: Լիբանանցի երաժշտագիտուհիին գործերը ունկնդրելէ ետք, Տիկին Վիալա մեծապէս կը գնահատէ անոր արուեստը, ուր կը տեսնէ վիպապաշտ դպրոցին մնայուն ազդեցութիւնը, արժէք մը, որ շատ հազուագիւտ է մեր դարուն:

Աւելի ետք, Օր.Այնթապլեան կ'ընդունուի Փարիզի երաժշտության բարձր քոնսերվատուառը, ուր Պր. Ժօրժ Ֆրիպուլէ, երաժշտական ուսումներու թեքնիք օգնականը, մեծապէս կը գնահատէ Օր. Այնթապլեանի հարազատ ոճը եւ հաւատարմութիւնը, հանդէպ վիպապաշտ դպրոցին: Մեծ վարպետը կը խնդրէ հայ արուեստագիտուհիէն՝ իր գործերէն մաս մը ձգել իր մօտ, հետագային ուսումնասիրելու համար:

23 Սեպտեմբերին, ձայնասփիւռի տան սրահներուն մէջ, իպատիւ Օր.Այնթապլեանի մեծ քօքթէյլ մը կը տրուի

կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ «Սօսիէթէ Էնթերնասիօնալ Տանքուրաժման օ Բրօկէ» կազմակերպութեան:

Քօքթէլլի ընթացքին, Պ. Սերժ Բօլ, Պրօկլիի դուքսին ներկայացուցիչը, Այնթապլեանը կը պարգեւատրէ ընկերակցութեան արծաթեայ մեծ շքանշանով: Օր. Այնթապլեան միաժամանակ պսակաւոր է Փարիզի արուեստից, գիտութեանց եւ գրականութեան մեծ շքանշանին:

Փարիզէն Հռոմ անցնելով, Օր. Այնթապլեան առանձնաշնորհուով կ'ունենայ մասնաւոր ունկնդրութեան մը արժանանալու Սրբազան Քահանայապետին կողմէ: Պօղոս Զ. Պապը, որուն իր յօրինումներէն մէկը՝ «Պապական Օրհնութիւնը», ձօնած էր Օր.Այնթապլեան, երբ վերջինս դէպի Հնդկաստան իր պատմական ճանապարհորդութեան ընթացքին էջք կը կատարէր Պէրութի օդակայանը: Ս.Քահանայապետը կը շնորհաւորէր մեծ արուեստագիտուհին եւ այդ առթիւ իր օրհնութեանց կողքին Այնթապլեանը կը պարգեւատրէր ոսկեայ շքանշանով մը, որուն մէկ երեսին փորագրուած էր Պօղոս եւ Պետրոս առաքելներուն նկարները, իսկ միւս երեսին՝ պապական շքանշանը: Նախապէս Ս.Պապը իր նուիրակին միջոցաւ վարձատրած էր Օր.Այնթապլեանը, ուղարկելով ոսկեայ վարդարան մը»²⁸:

Հատկորոշ է, որ «Pour toi seul» երգի տեքստի հեղինակներ Ժան Ժուենն ու Ժաննա Պակոն 1966-ի սեպտեմբերին Ա.Այնթապլեանին են ձոնել իրենց բանաստեղծութիւնը՝ AROUSSIAK AINTABLIAN աքրոստիկոսով:

ACROSTICHE

Dédié à AROUSSIAK AINTABLIAN

Par

Jean JOUENNE - Jeanne PACOUD

Membres des Sociétés Lyrique et Dramatique

²⁸ Արուեստի Այնթապլեանի յաջողութիւնը Հռոմի եւ Փարիզի մէջ, «Նոր Կեանք», 6 նոյեմբերի, 1966, էջ 3 և 22:

Lauréats d'Arts; Sciènes; Lettres et de la Ligue
du Dévouement National

A rtiste du Liban à la ferveur d'apôtre

R évant d'un monde heureux sans pauvres ni méchants

O ubliant tes malheurs pour pleurer ceux des autres

U n grand souffle d'amour émane de tes chants.

S ouffrance et désespoir loin d'abattre ton âme

S ont un terrain fertile, un ferment douloureux:

I ls font revivre en nous ces deux terribles drames:

A près l'horrible fin d'un frère affectueux

K ennedy abattu dans un meurtre odieux.

A ndantes, **adagios**, sous tes doigts se succèdent

I ndignés, révoltés par le démon du mal,

N ous révélant ainsi les tourments qui t'obsèdent,

T ous les élans d'un cœur tendre et sentimental

A rtiste du Liban, grande amie de la France.

B ienvenue à Paris en de trop brefs séjours.

L oin de toi tes amis gardent une espérance

I maginant déjà de plus fréquents retours.

A lors puisse ta muse ayant séché ses pleurs

N ous composer enfin des hymnes de bonheur.

Jean JOUENNE - Jeanne PACAUD

Paris, Septembre 1966²⁹

Տարիներ շարունակ Ա.Այնթապյանը Բզանսոնի Սուրբ Աննայի քույրերի հաստատության դաշնամուրի պրոֆեսոր էր: Ի պատասխան Աստղիկ Գոճայանի՝ «Ձեր ժամանակը ի՞նչ ձեռով բաժնած էք ձեր ուսուցչուհիի եւ յորինողի ասպարեզին կատարելապես հետեւելու

²⁹ Նյութեր Այնթապյանի մասին՝ անփոփոխ հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

համար» հարցին, պրոֆեսոր Ա.Այնթապյանը խոստովանել է՝ «Պրզանսընի դաշնակի տարիներու Փրոֆեսուրը ըլլալու հանգամանքովս շաբթուայ մի քանի օրը կը յատկացնեմ հոն, իսկ մնացեալ օրերուն կը զբաղիմ իմ անձնական աշակերտներովս, որոնց թիւը մօտաւորապէս յիսունի կը հասնի: Այս վերջիններուն մասնակցութեամբ է որ հանրութեան կը ներկայացնենք տարեկան մեր երաժշտական ունկընդորութիւնը, որոնց մասին տեղական մամուլը լայնօրէն կ'անդրադառնայ»³⁰:

Իր աշակերտներին քաջալերելու և ոգեշնչելու համար Ա.Այնթապյանը կազմակերպում է ամենամյա ունկընդորումներ, որոնց միակ նպատակն էր՝ բարձր պահել արվեստը և ծառայել արվեստին: Այդ համերգները նկատելի երևույթ դարձան Լիբանանի երաժշտական կյանքում: Ա.Այնթապյանի աշակերտների ամենամյա ունկընդորումին ներկա էին գտնվում բազում պաշտոնյաներ, ծնողներ և աշակերտների ընկերները: Ավելին՝ դրանք տեղի էին ունենում լիբանանյան բարձրաստիճան պաշտոնյաների հովանու ներքո³¹:

Ա.Այնթապյանն իր մանկավարժական գործունեությամբ մեծապէս նպաստեց դաշնակահար կադրերի պատրաստմանը Բեյրութում: Նրա սաների թվում էին ինչպէս հայ, այնպէս էլ արաբ պատանիներ ու աղջիկներ: Դրանով իսկ Ա.Այնթապյանն իր ծանրակշիռ նպաստն է բերել լիբանանյան դաշնամուրային կատարողական դպրոցի զարգացման գործին:

Համերգների ծրագրերում Ա.Այնթապյանն ընդգրկում էր դասական, ռոմանտիկ կոմպոզիտորների, ազգային կոմպոզիտորական դպրոցների ներկայացուցիչների, ժամանակակից, ինչպէս նաև արաբ կոմպոզիտորների գործերը՝ իր նպաստը բերելով Լիբանանում նրանց

³⁰ **Գոճայեան Աստղիկ**, Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 66:

³¹ Այսպէս՝ 1962-ի հունիսի 17-ի համերգը կազմակերպվել էր Արտաքին գործերի նախարար Ֆիլիպ Տակլայի, 1964-ի հունիսի 14-ի համերգը՝ Արտաքին գործերի նախարար Ֆուադ Ամմունի, 1966-ի հունիսի 5-ի համերգը՝ Կրթության նախարար Ֆուադ Բուտրոսի բարձր հովանու ներքո և այլն:

դաշնամուրային երաժշտության տարածման գործին: Ձևավորված ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր համերգի ընթացքում նրա շնորհավի սաներից մեկի կատարմամբ տեղի էր ունենում Ա.Այնթապյանի նոր ստեղծագործության պրեմիերան:

Իր սաների ամենամյա համերգներով Ա.Այնթապյանը նպաստել է նաև Լիբանանում Արամ Խաչատրյանի երաժշտության տարածմանը՝ դրանք ներառելով համերգների ծրագրերում: Իր սիրելի Ա.Խաչատրյանի «Սուսերով պարը» երկու դաշնամուրի համար առաջին անգամ հնչել է 1956-ի մայիսի 28-ի համերգի ժամանակ՝ Մալակ Բեյրութի և Հիլդա Ջանյանի կատարմամբ³²: Իսկ 1959-ից սկսած բոլոր համերգներին կատարվել է Ա.Խաչատրյանի երաժշտությունը՝ «Տոկատը», «Սուսերով պարը», Վալսը «Դիմակահանդեսից» և «Օրորոցայինը»: Դրանք նվագել են պրոֆեսորի ինչպես հայ, այնպես էր արաբ սաները:

1959-ի մայիսի 30-ի համերգի երկրորդ բաժնում «Սուսերով պարը» կատարել են Նադրա Խուրին և Հիլդա Ջանյանը³³: 1961-ի հունիսի 9-ի համերգի երկրորդ բաժնում Աստրիդ Գալուստյանը նվագել է Վալսը «Դիմակահանդեսից» և «Տոկատը», «Օրորոցայինը» հնչել է Աստրիդ Գալուստյանի ու Սոսի Պակլայանի, իսկ «Սուսերով պարը»՝ Անահիտ Պեչդիմալջյանի ու Աստրիդ Գալուստյանի կատարմամբ³⁴: 1962-ի հունիսի 17-ի համերգը եզրափակվել է Ա.Խաչատրյանի երաժշտությամբ՝ Սոսի Պակլայանը նվագել է Վալսը «Դիմակահանդեսից», իսկ Ժակի Նասրին և Սոսի Պակլայանը՝ «Սուսերով պարը» երկու դաշնամուրով³⁵: 1963-ի հունիսի 2-ի համերգը նույնպես եզրափակվել է խաչատրյանական հնչյուններով՝

³² Տե՛ս Programme, Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

³³ Տե՛ս Programme, Ծրագիր, 1959թ., 30 մայիսի, ֆրանս., տպ. 6 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 51:

³⁴ Տե՛ս Programme, Ծրագիր, 1961թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 7 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 52:

³⁵ Տե՛ս Programme, Ծրագիր, 1962թ., 17 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 53:

այս անգամ երկու դաշնամուրով Սոնա Դուզջանն ու Սուսի Պակլայանը նվագել են «Օրորոցայինը», իսկ Սուսի Պակլայանն ու Աստրիդ Գալուստյանը՝ «Սուսերով պարը»³⁶: 1964-ի հունիսի 14-ի համերգի երկրորդ բաժնում Վերա Աբի-Ժառուղեն կատարել է Վալսը «Դիմակահանդեսից»³⁷, իսկ 1965-ի հունիսի 13-ի համերգի երկրորդ բաժնում Վալսը հնչել է Պերլ Միսկի կատարմամբ³⁸: 1966-ի հունիսի 5-ի համերգի առաջին բաժնում Նառա Գյոթջերյանը կատարել է «Տոկատը», իսկ համերգն ավարտվել է Արտեմիս Դիլենյանի և Կլեր Մասասաբի կատարմամբ «Սուսերով պարով»³⁹: 1968-ի մայիսի 19-ի համերգի առաջին բաժնում Նառա Գյոթջերյանը կատարում է Վալսը «Դիմակահանդեսից», իսկ երկրորդ բաժնում Սոնա Քյուրքյանի և Նառա Գյոթջերյանի կատարմամբ հնչում է «Օրորոցայինը»՝ երկու դաշնամուրով⁴⁰: 1969-ի հունիսի 15-ի համերգի առաջին բաժնում Վաչե Չալակյանը նվագում է «Տոկատը», երկրորդ բաժնում Ժակլին Մասուղի կատարմամբ հնչում է «Սուսերով պարը», իսկ համերգը եզրափակվում է «Դիմակահանդեսից» Վալսով՝ Դարիո Ամադեոյի և Վաչե Չալակյանի կատարմամբ⁴¹: 1971-ի ապրիլի 25-ի համերգի երկրորդ բաժնում Արփինե Իփրանոյան-Պերլ Միսկ դուետի կատարմամբ հնչում է «Օրորոցայինը», ապա Վաչե Չալակյանը նվագում է «Տոկատը», համերգն ավարտվում է «Սուսերով պարով»՝ Անի Բոյաջյանի և Զիվան Չալակյանի կատարմամբ⁴²: 1974-ի հունիսի

³⁶ Sté u Programme, Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

³⁷ Sté u Programme, Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 55:

³⁸ Sté u Programme, Ծրագիր, 1965թ., ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

³⁹ Sté u Programme, Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, ֆրանս., տպ. 16 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 57:

⁴⁰ Sté u Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1968թ., 19 մայիսի, ֆրանս., տպ. 17 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 61:

⁴¹ Sté u Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

⁴² Sté u Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1971թ., 25 ապրիլի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62:

9-ի համերգի առաջին բաժնում Թերեզ Ջուեինի և Մոնա Ջաքարիայի կատարմամբ երկու դաշնամուրով հնչում է «Օրորոցայինը», Ջիվան Չալակյանը նվագում է «Տոկատը», իսկ համերգը, ձևավորված ավանդույթին հավատարիմ, կրկին եզրափակվում է խաչատրյանական ակորդներով՝ «Դիմակահանդեսից» Վալսը երկու դաշնամուրով նվագում են Լենա Դելենյանն ու Ջիվան Չալակյանը⁴³:

Հայկական դաշնամուրային երաժշտությունն Ա.Այնթապյանի սաների համերգում ներկայացվել է նաև 1965-ի հունիսի 13-ի համերգի առաջին բաժնում՝ Մոնա Դուրջյանի կատարմամբ հնչել է Սարգիս Բարխուդարյանի (1887-1973)՝ 1921-ին ստեղծված «Նազ-պարը»⁴⁴:

Ա.Այնթապյանի արխիվում առկա են 1952թ. հունիսի 22-ի⁴⁵, 1956թ. մայիսի 28-ի⁴⁶, 1957թ. հունիսի 14-ի⁴⁷, 1959թ. մայիսի 30-ի⁴⁸, 1961թ. հունիսի 9-ի⁴⁹, 1962թ. հունիսի 17-ի⁵⁰, 1963թ. հունիսի 2-ի⁵¹, 1964թ. հունիսի 14-ի⁵², 1965թ. հունիսի 13-ի⁵³, 1966թ. հունիսի 5-ի⁵⁴

⁴³ Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63:

⁴⁴ Տե՛ս Barkhoutarian, Naz-Bar, Ծրագիր, 1965թ., ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

⁴⁵ Տե՛ս Ծրագիր, 1952թ., 22 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 48:

⁴⁶ Տե՛ս Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

⁴⁷ Տե՛ս Ծրագիր, 1957թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 50:

⁴⁸ Տե՛ս Ծրագիր, 1959թ., 30 մայիսի, ֆրանս., տպ. 6 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 51:

⁴⁹ Տե՛ս Ծրագիր, 1961թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 7 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 52:

⁵⁰ Տե՛ս Ծրագիր, 1962թ., 17 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 53:

⁵¹ Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

⁵² Տե՛ս Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 55:

⁵³ Տե՛ս Ծրագիր, 1965թ., ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

⁵⁴ Տե՛ս Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, ֆրանս., տպ., 16 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 57:

համերգների ծրագրերը և 1968թ. մայիսի 19-ի⁵⁵, 1969թ. հունիսի 15-ի⁵⁶, 1971թ. ապրիլի 25-ի⁵⁷ և 1974թ. հունիսի 9-ի⁵⁸ համերգների կապակցությամբ հրատարակված հանդեսները՝ համերգների ծրագրերով: Դրանց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համերգների ծրագրերում Ա.Այնթապյանը մեծ տեղ է հատկացրել իր պաշտելի Շոպենի ստեղծագործություններին: Այսպես՝ 1952-ի հունիսի 22-ի համերգի առաջին բաժնում Հիլդա Ջանյանը կատարել է Valse op. 67, N 2, Ադլա Մասուդը՝ N 3 Բալլադը, իսկ Ռայմոնդ Նահասն ու Ադլա Մասուդը՝ Polonaise Militaire-ն երկու դաշնամուրի համար: Համերգի երկրորդ բաժնի առաջին մասը լիովին նվիրվել է Շոպենի գործերի կատարմանը. հնչել են՝ Nocturne N 2, Deux Valses - en fa mineur, en do dièse mineur, Deux Etudes – en mi bémol majeur, en do mineur, Scherzo N 2⁵⁹:

Հաջորդ համերգներից յուրաքանչյուրի ծրագրում անպայմանորեն ընդգրկվել են Շոպենի գործերից մի քանիսը, և դա այն դեպքում, որ մյուս հեղինակները հիմնականում ներկայացվել են մեկական ստեղծագործություններով:

1956-ի մայիսի 28-ի համերգի առաջին բաժնում Նադրա Խուրին կատարել է Շոպենի Valse op. 69, N 1, Արփիինե Թելյանը՝ Valse op. 69, N 2, իսկ Ֆենիսի Մավրովոնիոտիսը՝ 3-8 մագուրկաները: Համերգի երկրորդ բաժնի առաջին մասը լիովին նվիրվել է Շոպենի գործերի կատարմանը. Սալվա Աբի-Ժաուդեն նվագել է՝ Deux Préludes, Nocturne op. 9, N 2, Valse en do dièse mineur⁶⁰...

⁵⁵ Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1968թ., 19 մայիսի, ֆրանս., տպ. 17 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 61:

⁵⁶ Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

⁵⁷ Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1971թ., 25 ապրիլի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62:

⁵⁸ Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63:

⁵⁹ Sté u Programme, Ծրագիր, 1952թ., 22 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

⁶⁰ Sté u Programme, Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

Հընթացս համերգների հնչել են Բախի, Հենդելի, Ժան Ֆիլիպ Ռամոյի, Լուի Կլոդ Դակենի, Ֆրիդրիխ Կուլաուի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, Լյուդվիգ վան Բեթհովենի, Յոհաննես Բրամսի, Կարլ Մարիա Վեբերի, Ֆրանց Շուբերտի, Ֆերենց Լիստի, Նորբերտ Բյուրգմյուլլերի, Անտոն Դիաբելլիի, Էդվարդ Գրիգի, Կլոդ Դեբյուսիի, իսպանացիներից՝ Մանուել դե Ֆալյայի, Իսահակ Ալբենիսի, Էնրիկե Գրանադոսի, լեհերից՝ Մորից Մոշկովսկու, Իգնացի Յան Պադերնսկու, Ալեքսանդեր Տանսմանի, ռուս կոմպոզիտորներից Պյոտր Չայկովսկու և Սերգեյ Ռախմանինովի, արաբ հեղինակների և այլոց դաշնամուրային գործերը:

Փայլուն դաշնակահար Ա.Այնթապյանը ստեղծագործել է հիմնականում դաշնամուրի համար՝ ստեղծելով խոշոր կտավի գործեր ու մանրանվագներ: Նրա ժառանգության մեջ տեղ ունեն երկու դաշնամուրի համար արված գործերը ևս, ինչպես նաև երեք երգ՝ «Pour toi seul»⁶¹ («Միայն քեզ համար») ֆրանսերեն տանգոն ձայնի և դաշնամուրի համար (խոսք՝ Ժան Ժուենի և Ժաննա Պակոյի), «Un cour sous la pierre»⁶² («Միրտ մը քարին տակ») հայերեն երգը ձայնի ու դաշնամուրի համար (խոսք՝ Միհրան Տամադյանի) և «Priere»⁶³ (առանց խոսքի):

Ա.Այնթապյանի ստեղծագործությունները հնչել ու տարածվել են ոչ միայն Լիբանանում, այլև նրա սահմաններից դուրս՝ միջազգային ճանաչման հետ միասին կոմպոզիտորին բերելով տարբեր դիպլոմներ, մրցանակներ, մեդալներ ու շքանշաններ, որոնք գուրգուրանքով ցույց տալով Աստղիկ Գոճայանին, Ա.Այնթապյանը ներկայացրել է դրանք. «Այս մեկը «Կրանտ Մէտայլ տ'Օնեօր»ն է,

⁶¹ «Pour toi seul», անթվակիր, Բեյրութ, ֆրանս., տպ. 2 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 29:

⁶² «Un cour sous la pierre» (Միրտ մը քարին տակ), կից՝ երգի մեղեդին, ձեռագիր 4 թերթ, 2 թերթ, 3 թերթ, 5 թերթ, 3 թերթ, 5 թերթ, ընդ.՝ 22 թերթ, 6 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 31:

⁶³ «Priere», անթվակիր, առանց գրական տեքստի, ձեռագիր 2 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 30:

«Արուեստի Գիտութիւններու եւ Գրականութեան Ընկերակցութեան» կողմէ, ստացած Բարիզ, 1954 թուին: Յաջորդը բացատրութիւն չկարօտիր. նշանաւոր Քենըտիի կիսանդրին է, մետալի վրայ⁶⁴, անոր կողքին Մր. պապին շնորհած ոսկի մետալը⁶⁵: Անդին կ'երեւին երեք տարբեր տեսակի ֆրանսական շքանշաններ, ստացուած յաջորդաբար 1966-ին եւ 1967-ին:

ա. – Սօսիէթէ տ'Անքուրաժուման Օ Բրօկրէ:

բ. – Ունիօն Ինթերնասիոնալ տիւ Պիէն Բիւպլիք եւ ամենէն կարեւորը՝ Մերիթ, Օրտըր տէ Քօմանտէօր»⁶⁶:

Այնթապլյանն արժանացել է «Լիբանանի Մայրի» մեդալին, քանի որ մի կողմից՝ նրա ժառանգության մեջ կան Լիբանանին նվիրված գործեր՝ «Hymne au Liban», «La tragédie du Liban» և «Bénédiction Papale au Liban» մյուս կողմից՝ արաբական դաբկէների փոխադրումները դաշնամուրի համար:

1967թ. Փարիզում Ա.Այնթապլյանը ստանում է Առաջընթացի խրախուսման հասարակության պատվո արծաթե դիպլոմ: «1967թ. ապրիլի 9-ին Առաջընթացի խրախուսման հասարակության կողմից պարգևների հանդիսավոր բաշխման ընթացքում հաճույք ենք ունեցել տեսնելու և ծափահարելու Ա.Այնթապլյանին:

Փարիզյան գրական և երաժշտական շրջապատը սկսում է լավ ճանաչել Ա.Այնթապլյանին, ով պարգևատրվել է շքանշանով մի քանի ամիս առաջ՝ Ռադիոյի և հեռուստատեսության տանը, Հանրային բարօրության համընդհանուր Լիգայի կողմից»⁶⁷:

⁶⁴ «Քենեդի» հուշամեդալն Ա.Այնթապլյանը ստացել է Ջոն Քենեդու հիշատակին նվիրված «La tragédie de Dallas» (1963) ստեղծագործության համար, Լիբանանում, ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական ծառայության տնօրէն Վիլիամ Օմանից՝ ԱՄՆ դեսպան Արմին Մեյերի անունից:

⁶⁵ Պապական ոսկէ մեդալն Ա.Այնթապլյանը ստացել է Պողոս VI Պապին նվիրված «Bénédiction Papale au Liban» (1965) ստեղծագործության համար:

⁶⁶ **Գոճայեան Աստղիկ**, Արուեստէկ Այնթապլէանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերէն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, ԳԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 66:

⁶⁷ Առաջընթացի խրախուսման հասարակության հանդիսավոր պարգևատրումը (պարգևների հանդիսավոր բաշխումը), Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված

Այդ իրադարձության կապակցությամբ Լուի Շեկրալան «Le Soir»-ի 1967 թվականի ապրիլի 28-ի համարում գրեց. «Պարզևի արժանացած լիբանանցիների ցուցակն օրըստօրե հարստանում է: Քամել Սուբահից, Միքայել Դեբաքեյից և մյուսներից հետո, Ա.Այնթապյանը փառավորել է Լիբանանի անունը աշխարհի չորս ծագերում: Նա մեկնել է Փարիզ, որտեղ նրան կհանձնվի Առաջընթացի խրախուսման միավորման արձաթե մեդալ: Նա արժանի է այդ պարգևին, որը նրան կհանձնեն երաժշտության բնագավառում իր աշխատանքի համար:

Այս մեդալն ապրիլի 9-ին Փարիզի բժշկական նոր ֆակուլտետի ամֆիթատրոնում նրան հանձնել են Գիտությունների ակադեմիայի մշտական քարտուղար, ֆրանսիական ակադեմիայի անդամ, ֆիզիկայի նոբելյան մրցանակակիր, Առաջընթացի խրախուսման հասարակության կառավարման խորհրդի պատվավոր նախագահ դուքս Լուի դը Բրոյլը, նախագահի պաշտոնակատար, գիտությունների ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Լեոպոլդ Էսկանդը:

Ա.Այնթապյանին շնորհավորեցին առաջընթացի քաջալերման ընդհանուր քարտուղար Ժակ Սուլան, ֆրանսիական օդային ուժերի գեներալ դոկտոր Սուբրիանը, «Ծառայության համար» շքանշանի նախագահ պարոն Մերերը, ով լիբանանյան կոմպոզիտորին հանձնեց «Ծառայության համար» շքանշանի ժապավենը: Շնորհավորելով Ա.Այնթապյանին՝ մենք մեզ ենք շնորհավորում, քանի որ նրա անունն ականավոր գրականագետների, գիտնականների՝ ֆրանսիացի կոմպոզիտոր Ժորժ Օրիկի, գունավոր հեռուստացույցի ստեղծող Անրի Ֆրանցի, «ռադիոստեղորոշիչի հայր» սիր Բոբերտ Վաստոն Վոթի և այլոց կողքին է»⁶⁸:

Ինչպես տեսնում ենք՝ չափազանց սերտ են եղել Ա.Այնթապյանի կապերը Փարիզի հետ, որտեղ նա վերջնականապես

հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63:

⁶⁸ **Louis Chocrallah**, Aroussiak Aintablian, Le Soir, 28.04.1967.

ձևավորվել էր որպես դաշնակահար ու ստեղծագործող: Այսպես, իր Ռապսոդիա N 1-ը նա նվիրել է Փարիզի հայտնի փաստաբան Թեոդոր Վալենսին: Այն «ներշնչվել է և ստեղծվել Ֆոնտենբյուրյի հիասքանչ միջավայրում»⁶⁹: Ավելին՝ «Փարիզում երգիչները, բանաստեղծներն ու արվեստագետները մեր կոմպոզիտորի «Ռապսոդիա համար 1»-ը տոնում էին մի շարք հետաքրքիր միջոցառումներով: Ա.Այնթապյանը ջերմորեն ընդունվեց շատ հայտնի անհասների կողմից: Նրա պատվին հայտնի ակորդեոնահար Ֆրեդո Գարդոնին շամպայն է բացում Աստղերի բարում և կատարում է իր նվագացանկի լավագույն ստեղծագործությունները: Կարոլ Բրոնտեն Ա.Այնթապյանի պատվին երգում է և արևելյան պար պարում»:

«Օրիորդ Ա.Այնթապյանը վերջերս պատիվ է ունեցել կապ հաստատելու Փարիզի երաժշտության Ազգային Կոնսերվատորիայի հետ և այնտեղ ծանոթանալու պարոն Էդմոն Մարկի հետ, ով կոմպոզիտոր է և երաժշտության դասախոս, այդ հաստատությունում օտարերկրացիների ծառայության տնօրենը: Այնթապյանը նրան ցանկացել է ցույց տալ իր նախագծերը, որոնք վերաբերում են իր աշակերտների նախապատրաստմանը՝ կոնսերվատորիա մուտք գործելու համար և վերջում դիպլոմ ստանալու համար: Այս նախագծերը շատ սիրով ընդունվեցին, ինչպես պարոն Էդմոն Մարկի, այնպես էլ այլ որակավորված անհասների կողմից, որոնք արդարացիորեն բարձր են գնահատում կոնսերվատորիայի և օտար երկրների միջև գեղարվեստական նեղ համագործակցությունը: Նրանք գտնում են, որ դա միայն կծառայի երաժշտությանը:

Օրիորդ Ա.Այնթապյանն, ի դեպ, որպես մանկավարժ և կոմպոզիտոր իր գիտելիքների և դասավանդման իր մեծ փորձի շնորհիվ որակավորված է լավ կատարելագործելու համար այն նախագծերը, որոնք մեզ է ներկայացրել:

⁶⁹ Նույն տեղում:

Փարիզ, 12 հոկտեմբերի, 1953»⁷⁰:

Հումանիստական ուղղվածությամբ է առանձնանում Ա.Այնթապյանի ստեղծագործության գաղափարական բովանդակությունը: Նրա ուշադրության կենտրոնում են գտնվել մարդկության ապագայի հետ կապված համամարդկային թեմաներ: Առաջին հերթին՝ խաղաղության թեման՝ «La Paix» («Խաղաղություն»)՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար ՈԻ Թանին (1968) և «Bénédiction Papale au Liban» («Պապի օրհնությունը Լիբանանում»)՝ նվիրված Հռոմի 262-րդ պապ Պողոս VI-ին (1965): Հումանիստ կոմպոզիտորն իր բողոքի ձայնն է բարձրացնում հումանիզմի հակոտնյաների դեմ. մի դեպքում նա դատապարտում է պատերազմները՝ «Hommage» («Հարգանքի տուրք»)՝ նվիրված Շառլ դը Գոլին (1969), մյուս դեպքում՝ ահաբեկչությունը՝ «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»)՝ նվիրված ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու հիշատակին (1963): Միննույն ժամանակ կոմպոզիտորին ոգևորում են մարդկության գիտական մտքի նվաճումները «Odysseé Spatiale» («Տիեզերական ողիսական», 1970): Դեռևս Ա.Այնթապյանի կենդանության օրոք նշվել է, թե՛ «իր մօտ շեշտուող նկարագրի ամենեն զորաւոր գիծն է մարդկայինը: Եւ որովհետեւ իսկական արուեստը ցեղի, կրօնքի եւ ազգութեան ստեղծած կաշկանդումները յաճախ կ'անտեսէ, Արուսեակ Այնթապլեան ներշնչուած է միջազգային առում ունեցող նիւթերով եւ դէպքերով, որոնք մօտիկ են մարդկային հոգիին»⁷¹: Պատասխանելով թղթակցի «Ի՞նչ ձեռով կը յօրինէք ձեր երաժշտական կտորները» հարցին նա խոստովանել է՝ «Անոնք ինձի կը ներկայանան վայրկենական ներշնչումով մը, զոր անմիջապէս թուղթին պէտք է յանձնուի: Նիւթի մը մասին երկար ժամանակ մտածելով չէ որ ներշնչումը կը հրաւիրեմ, այլ ան կուգայ

⁷⁰ Նյութեր Այնթապյանի մասին՝ անփոփած հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

⁷¹ **Գոճայեան Աստղիկ**, Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, ԳԱԹ, Արուսյակ Այնթապյանի ֆոնդ N 66:

յանկարծ եւ ես անոր ձեւ ու մարմին կուտամ դաշնակիս վրայ փորձելով զանազան երաժշտական նախադասութիւններ եւ պարբերութիւններ»⁷²:

Ցավոք, Ա.Այնթապլյանի դաշնամուրային ստեղծագործության մեջ չկա անդրադարձ հայկական թեմաներին: Ի պատասխան թղթակցի «հետաքրքիր է իմանալ թէ երբեք չե՞ք ներշնչուած ազգային դէպքով մը, ըլլայ այդ պատմական թէ այժմեական, եւ կամ կը ծրագրե՞ք նման կտոր մը յօրինել» պրոֆեսորը խոստովանել է. «Շատեր ուղղած են ինձի այդ հարցումը, նոյնիսկ առաջարկուեցաւ Մեծ Եղեռնի յիշատակին յօրինել երաժշտական գործ մը: Սակայն ինչպէս արդէն յիշեցի, ապսպրանքի վրայ եւ կամ դիտումնաւոր կերպով չեմ կրնար ընել այդ եւ թէ ներշնչումը ինքն է որ պիտի գայ զիս աշխատանքի լծուելու: Ճիշդ է որ ներշնչումի աղբիւրներ չեն պակսիր հայ իրականութեան մէջ եւ վստահ եմ թէ գեղեցիկ օր մը պիտի կարենամ ժողովուրդիս նուիրել իմ հայու զգացումներուս հաւաստիքը»⁷³:

Փայլուն դաշնակահարուհու և հմուտ մանկավարժի՝ պրոֆեսոր Ա.Այնթապլյանի ստեղծագործական հետաքրքրությունների կենտրոնում հարատև գտնվել է դաշնամուրը, որին է վստահել իր հույզերն ու ապրումները: Եվ դա պատահական չէ՝ Փարիզում Ալֆրեդ Կորտոյի ղեկավարությամբ իր երաժշտական կրթությունն ավարտած կոմպոզիտորը հետագայում խոստովանել է, թէ «Հոն էր նաեւ որ ձեւ ու մարմին առաւ յօրինողի ոճս որը յստակօրէն Շոբենիստ է եւ հետեւաբար սանթիմանթալ ու րոմանթիք»⁷⁴: Եվ ինչպէս Շոպենը, այնպէս էլ Ա.Այնթապլյանն իր ստեղծագործությանն մեջ սահմանափակվեց դաշնամուրով:

Հարուստ ու բազմազան է Ա.Այնթապլյանի գեղարվեստական աշխարհը. մի կողմից՝ խոր հոգեբանականություն ու նուրբ լիրիզմ,

⁷² Նույն տեղում:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

մյուս կողմից՝ ռեալ իրականություն: Դաշնամուրային ստեղծագործություններում գերակշռում են մի կողմից՝ սիրո, մյուս կողմից՝ տխրության, թախծի, բաժանման, մահվան մոտիվները: Ավելին՝ Ջոն Քենեդու հիշատակին է նվիրել «Դալասի ողբերգությունը», իսկ իր վաղամեռիկ եղբոր հիշատակին՝ «Շիրմի վրա»-ն և «Արցունքները»:

Ա.Այնթապլյանն իրեն իրավացիորեն համարել է ռոմանտիզմի ներկայացուցիչ: Պատասխանելով Աստղիկ Գոճայանի «Արուեստի քննադատներու կարծիքը ի՞նչ է ձեր ոճին նկատմամբ» հարցին՝ պրոֆեսորն ասել է՝ «Անոնք հագուագիւտ կը նկատեն զայն, մանաւանդ այս դարուս, ուր կը տիրէ իրապաշտն ու գերիրապաշտը: Ճիշդ այս պատճառով էր որ երբ վերջերս Բարիզի մէջ երաժշտասերներու եւ արուեստագէտներու խումբ մը ունկնդրեց «Տալլասի Ողբերգութիւն»ն ու յօրինումներէս մի քանին, անակնկալի եկած 19-րդ դարու պատկանող այդ զգացական մօտեցումէն, ինծի առաջարկուեցաւ տրամադրել վիլլա մը, ուր պիտի մնայի երկու ամիս եւ եղանակներ յօրինելի շարք մը բոմանթիք բանաստեղծութիւններու: Ընդունեցի. քաշուեցայ բնութեան այդ խաղաղ անկիւնը եւ գործի լծուեցայ: Մի քանի օր վերջ արդէն աւարտած էին աշխատանքս»⁷⁵: Ուստի միանգամայն տրամաբանական է, որ իր ստեղծագործություններում նա մեծ տեղ է հատկացրել ծրագրայնությանը, ընդ որում՝ մի դեպքում ընդհանրացված, այսինքն՝ վերնագրված է միայն պիեսը, ինչպես, օրինակ, «Տխրություն», «Ափսոսանք», «Բաժանում», Ջորջ Այնթապլյանի հիշատակին նվիրված «Արցունքները» և այլն, ինչպես նաև գործեր երկու դաշնամուրի համար՝ «Հուշ», «Միայն քեզ համար» և այլն, իսկ մյուս դեպքում առկա է ստեղծագործության ծավալուն սյուժե՝ «Hymne au Liban» («Ձոն Լիբանանին»), «La Paix» («Խաղաղություն»), «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»), «Sur une tombe» («Շիրմի մոտ»), «Hommage» («Հարգանքի տուրք»), «Odyssée Spatiale» («Տիեզերական

ողիսական»), «Bonheur perdu» («Կորսված երջանկություն», Թույլ տվեք ինձ արտասվել)՝ նվիրված իր բժիշկ Ֆուադ Նիկոլա Հադդադին, «Consolation» («Մխիթարություն»), «Les Adieux» («Հրաժեշտը»)՝ նվիրված նրանց, ովքեր սիրել են: Որոշ դեպքերում նշում է միայն ժանրը՝ Ֆանտազիա, Ռապսոդիա և այլն:

Լիբանանի հավատարիմ քաղաքացին անդրադարձել է լիբանանյան ժողովրդական դաբկեներին՝ դրանք մշակելով դաշնամուրի և երկու դաշնամուրի համար՝ «Chatti ya dinnyi» և «Debki N 2» («Ya Ghzayel»), գրել «Ձոն Լիբանանին», «Լիբանանի ողբերգությունը», «Սաիդ Ակլ» և «Պապի օրհնությունը Լիբանանում» և այլն:

Մելոդիկայում միահյուսված են վոկալայնությունն ու գործիքայնությունը, երգայնությունն ու պարայնությունը (վալս, տանգո), կանտիլենան և ասերգը: Ի դեպ՝ թեև նրա դաշնամուրային պիեսների պահպանված ձեռագրերում չենք հանդիպում վալսի, և հայտնի է, որ 1965թ. հունիսի 13-ի համերգի ժամանակ Արտեմիս Դելենյանը նվագել է կոմպոզիտորի «Grand Valse Brillante»-ն, սակայն նրա բազմամաս գործերում բազմաթիվ են որպես առանձին բաժին վալսի կիրառման դեպքերը: Այսպես՝

«**Bénédiction Papale au Liban**» - 5-րդ մասում (Allegro animato)

9-րդ մասում (Moderato)

11-րդ մասում (Presto)

12-րդ մասում (Prestissimo)

«**La Paix**» - 6-րդ մասում՝ Allegro (Tempo di Valse)

«**Hommage**» - Մաս երկրորդ - N 3, Allegro animato (Tempo di Valse: espoir - Հույս)

Մաս երրորդ - N 4, Allegro vivace (Tempo di Valse: combat - Մարտ)

N 6, Presto Prestissimo (Valse sautillante: Victoire - Ցատկոտող վալս. Հաղթանակ)

⁷⁵ Նույն տեղում:

Rhapsodie N 2 - Վալս a-moll

Rhapsodie N 3 (Bonheur retrouvée) - Վալս cis-moll

Rhapsodie N 3 (Réve poétique) - Վալս cis-moll:

Լադահարմոնիկ տեսակետից՝ զարմանալիորեն նրա գրեթե ողջ ստեղծագործությունը գրված է մինորում՝

«Ձոն Լիբանանին», «Հարգանքի տուրք», «Խաղաղությունը», Ռապսոդիա N 1, «Ափսոսանք», «Հուշ» և այլն՝ c-moll,

«Միլիթարություն», «Դալասի ողբերգությունը», «Արցունքները», «Բաժանում»՝ f-moll,

«Կորսված երջանկություն», «Շիրմի վրա»՝ es-moll,

«Հրաժեշտը», Ռապսոդիա N 2՝ b-moll,

Ռապսոդիան, N 3 երկու Ռապսոդիաները՝ cis-moll,

«Տխրություն»՝ fis-moll և այլն:

Ընդ որում, ստեղծագործության ամբողջ ընթացքում պահպանելով միննայն տոնայնությունը՝ կոմպոզիտորը ստեղծում է կուռ ու ամբողջական դրամատուրգիա: Առանձին մասերի միջև հակադրություն ու տարաբնույթ կերպարներ ստեղծելիս չի դիմում լադային կոնտրաստներին, մաժոր հատվածներ չկան: Օգտագործում է ռեգիստրային և ֆակտուրային հնարներ:

Ա.Այնթապյանի ստեղծագործության միջով կարմիր թելի պես անցնում է բնական մինորի վերին տետրախորդը՝ վարընթաց շարժմամբ, որը բազմազան կիրառմամբ ստեղծում է տարբեր կերպարներ:

Լինելով փայլուն դաշնակահար՝ Ա.Այնթապյանը բացահայտեց դաշնամուրային ֆակտուրայի հարուստ հնարավորությունները: Նրա գործերն ընդգրկում են գործիքի ողջ դիապազոնը: Հանդիպում են ֆիգուրացիոն թեմատիզմի արտահայտիչ նմուշներ: Ա.Այնթապյանի դաշնամուրային ոճն առանձնանում է մեղեդայնությամբ, ճկունությամբ՝ դաշնակահարից պահանջելով վիրտուոզություն: Հաճախ կոմպոզիտորը դաշնամուրը մեկնաբանում է որպես նվագախումբ՝ վերարտադրելով նվագախմբային հնչողություն:

Ա.Այնթապլյանի դաշնամուրային ստեղծագործության ժանրերն ու ձևերը ռոմանտիզմի հունում են: Կոմպոզիտորի մոտ հավասարաչափ տեղ են գրավում ինչպես մանրանվագը, այնպես էլ խոշոր՝ մեկմասանի կամ ցիկլիկ ձևը: Ընդ որում՝ բազմամաս ձևերն օժտված են միջանցիկ զարգացմամբ, երբեմն հանդիպում են մոնոթեմատիզմի կիրառման դեպքեր, թեմատիկ կամարներ:

Анна Асатрян, Творческий портрет Арусяк Айнтаплян - В наследии родившейся в Мерсине (Турция), окончившей Факультет музыки Американского университета Бейрута, завершившей музыкальное образование в Париже и представляющей направление романтизма в музыке Арусяк Айнтаплян, естественно, большое место занимают фортепианные произведения. Ее перу принадлежат работы, посвященные известным политическим, государственным, духовным, общественным деятелям, в том числе: “Bénédiction Papale au Liban” /“Папское благословение Ливану”/ – посвящение 262-му Папе Римскому Павлу VI (1965), “Hymne au Liban” /“Гимн Ливану”/ – посвящение президенту Ливанской Республики Шарлю Элү (1966), “La Paix” /“Мир”/ – посвящение Генеральному Секретарю ООН У Тану (1968), “La Tragédie de Dallas” /“Трагедия Далласа”/ – памяти 35-го президента США Джона Фитцджеральда Кеннеди (1963), “Hommage” /“Дань уважения”/ – посвящение Шарлю де Голлю (1969), а также: “Sur une tombe” /“У надгробия”/, “Les Larmes” /“Слезы”/ – памяти скоропостижно скончавшегося брата композитора Джорджа Айнтапляна (1964), “Bonheur perdu” /“Утерянное счастье” [Позвольте мне пролить слезы]/, “Odyssée Spatiale” /“Космическая одиссея”/ (1970), “Tristesse” /“Грусть”/, “Regret” /“Сожаление”/, “Separation” /“Разлука”/, “Consolation” /“Утешение”/, “Les Adieux” /“Прощание”/; фортепианные рапсодии, Фантазия, произведения для двух фортепиано: “Souvenir” /“Воспоминание”/, “Pour toi seul” /“Только для тебя”/ и другие. Является также автором песен на армянские и французские тексты. Среди

произведений композитора особое место занимают обработки для фортепиано и двух фортепиано ливанских народных дабке.

Anna Asatryan, Creative portrait of Arusyak Aintaplyan -Born in Mersin (Turkey), Arusyak Aintaplyan graduated from the American University of Beirut, the Department of Arts, accomplished her musical education in Paris, adhering to romantic music – which explains the predominance of works for piano among her oeuvre. She authored pieces dedicated to renowned political, state, clerical and public figures: “Benedicio Papale au Liban” /“Papal Blessing to Lebanon”/ – dedicated to the 262th Pope Paul VI of Rome (1965), “Hymne au Liban” /“Hymn to Lebanon”/ – to the President of the Republic of Lebanon Charles Helou (1966), “La Paix” /“Peace”/ – to UN Secretary-General U Thant (1968), “La Tragédie de Dallas” /“The Tragedy of Dallas”/ – in commemoration of the 35th US President John Fitzgerald Kennedy (1963), “Hommage” /“Homage”/ – to Charles de Gaulle (1969); as well as: “Sur une Tombe” /“By a Tomb”/, “Tears” – to commemorate the composer’s untimely deceased brother George Aintaplyan (1964), “Bonheur Perdu” /“Lost Happiness” [Allow Me to Shed Tears]/, “Sorrow”, “Regret”, “Separation”, “Consolation”, “Les Adieux” /“Farewell”/, “Odyssée Spatiale” /“Space Odyssey”/ (1970); piano rhapsodies, fantasies, pieces for two pianos: “Recollection”, “For You Alone”, etc. She also wrote songs on Armenian and French texts. The Lebanese composer of Armenian descent attached considerable importance to the folk music of Lebanon; in particular, she arranged for one and two pianos the Lebanese folk dance dabke.